Տ. ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(մարտի 16, 2024 թ.)

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Մոտ քառասուն օր առաջ ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տասնմեկ միաբան սարկավագներով, Երեւանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու Սուրբ Խորանին ծունկի եկանք ամենատես Աստծու առաջ եւ ուխտեցինք մեր անձերը դնել հայ ազգի եւ Հայ Եկեղեցու զոհասեղանին՝ այլեւս որպես ձեռնադրյալ եւ օծյալ ծառաներ ու սպասավորներ:

Անդրանիկ այս Սուրբ Պատարագով եւ քարոզով, հուզումնալից հոգեւոր ապրումներով, ահա՛ Տիրոջ Սուրբ Սեղանի առջեւ կանգնած՝ գոհության իմ աղոթքն եմ առաքում առ բարձրյալն Աստված, որ մարդասիրաբար ինձ՝ նվաստիս, քահանայական այս վեհ կոչման միջոցով մասնակիցը դարձրեց առաքյալների սրբազան գործի:

Այսօր, նախեւառաջ, որդիական սիրով եւ խոնարհումով՝ երախտիքի խոսքս եմ ուղղում ազգիս շնորհազարդ Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որի գահակալության օրոք մուտք գործեցի հոգեւոր ասպարեզ՝ առաջին քայլերն անելով իր իսկ հիմնած, իրավամբ Հայրապետի անդրանիկ զավակը հանդիսացող Վազգենյան հոգեւոր դպրանոցի սրբազան հարկից ներս: Սկսյալ ուսանողական մեր անմոռանալի տարիներից՝ Վեհափառ Հայրապետն իր սիրելի սաներին՝ մեզ, ուղղորդում էր դեպի այս լուսավոր օրը: Անուրանալի է Հայոց Հայրապետի դերը մեր անձերի ձեւավորման գործում, քանզի նրա անմիջական հոգածության ու խնամքի ներքո ենք կրթել եւ կերտել մեր հոգեւոր «ես»-ը: Սրտագին աղոթքս է, որ Աստված ազգընտիր Հայրապետին պարգեւի քաջառողջություն, արեւշատություն եւ երկար բարեբեր հայրապետական տարիներ՝ ի շահ Հայ Առաքելական մեր Մայր Եկեղեցու եւ ի փառս ազգիս Հայոց:

Շնորհապարտ սերս ու երախտագիտության զգացումս եմ հայտնում նաեւ հոգեւոր ծնողիս՝ Իրաքի հայոց թեմի հոգեւոր առաջնորդ Գերաշնորհ

Տ. Օշական եպս. Գյուլգյուլյանին, որի ձեռամբ այս տարվա փետրվարի 4-ին ընդունեցինք կուսակրոն քահանայի կոչում՝ համալրելով Մայր Աթոռի միաբանության շարքերը:

Շնորհակալական խոսքս՝ նաեւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի լուսարարապետներին, որոնց բարեգութ եւ գթառատ ձեռքի տակ՝ որպես սարկավագներ, մեր ծառայությունը իրականացրեցինք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Երախտիքս նաեւ Մայր Աթոռի անկոտրում միաբանությանը եւ այն անձանց, որոնք իրենց ջերմագին խորհուրդներով աջակից են եղել ինձ եւ սիրով ու ջերմությամբ ընդունել իրենց նվիրական շարքերում:

Որդիական անկեղծ խոնարհումս եմ հայտնում նաեւ Վազգենյան եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանների տեսչական եւ դասախոսական կազմերին, որոնց քրտնաջան եւ օրինիբուն աշխատանքի շնորհիվ ահա՛ այսօր կանգնած եմ ձեր առջեւ՝ որպես օծյալ սպասավորը Հայ Առաքելական մեր Մայր Եկեղեցու:

Խորին շնորհակալությունս Արագածոտնի թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Մկրտիչ եպս. Պողոյանին, որի օրհնությամբ անդրանիկ եւ Ուխտի պատարագս եմ մատուցում հայոց առաջին մեծ Ուսուցչի շիրիմին վեր խոյացող եւ նրա անունը կրող այս սուրբ եկեղեցում:

Խոնարհումս ծնողներիս, որոնք սիրահոժար կերպով ընդունեցին աստվածային նախախնամությունը եւ իմ քայլերն ուղղեցին առ Աստված ու Նրա տան սպասավորությանը:

Խոնարհումս նաեւ Ձե՛զ, սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ: Այսօր մենք նաեւ ձեր աղոթքներն ենք հայցում առ Աստված՝ մեր հավատքի զորության եւ անսասանության համար:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն:

«Եթէ ոք կամի զկնի Իմ գալ, ուրացցի զանձն եւ առցէ զխաչ իւր եւ եկեսցէ զկնի Իմ...»
(Մատթ. ԺԶ. 24)։

Սիրելի՛ հավատացյալներ,

Այսօր խորախորհուրդ եւ սքանչելի տոն է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում: Այսօր ազգովի տոնում ենք մեր բազմաչարչար առաջին Հայ-

րապետ Սբ. Գրիգոր Լուսավորչի մուտն ի վիրապ։ Այսօր անթիվ-անհամար հայ հավատացյալներ այցելում են Խոր վիրապ, ջերմանում սրբագործված ուխտավայրից ճառագող աստվածային լույսով եւ մտքով ու հոգով հաղորդակցվում պատմական այն բոլոր իրադարձություններին, որոնք ավելի քան 1700 տարի առաջ տեղի ունեցան Հայաստան աշխարհում՝ որպես աստվածային կամքի դրսեւորում եւ շնորհի հեղում։

Բոլորիս էլ ակամայից հետաքրքրում է՝ ով էր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, որ ստանձնեց Հայոց աշխարհում Քրիստոսի փրկչական լույսը սփռելու առաքելությունը։

Գրիգոր Լուսավորիչը ծնվել է Հայոց Խոսրով արքային պարսից շահի հրամանով դավադրաբար սպանած Անակ Պարթեւի ընտանիքում։ Խոսրով արքայի սպանությունից հետո հայ իշխանները սրի են քաշում պարթեւ Անակի ողջ գերդաստանը. հրաշքով փրկվում է միայն Սուրբ Գրիգորը, որին տանում են Կեսարիա։ Այնտեղ նա դաստիրակվում է քրիստոնեական արժեհամակարգով եւ լուսավորվում աստվածային իմաստությամբ։

Նույն շրջանում արքայազն Տրդատը Հռոմում ռազմական փայլուն կրթություն է ստանում եւ աչքի ընկնում որպես անհաղթ մարտիկ՝ թագադրվելով Մեծ Հայքի արքա։

Տրդատը՝ հռոմեական զորքերի գլուխ անցած, վերադառնում է Հայոց աշխարհ՝ հայրենիքը պարսկական լծից ազատագրելու։ Սուրբ Գրիգորը, իմանալով իր հոր դավաճանության մասին, ծառայության է անցնում Տրդատի մոտ՝ քավելու հոր մեղքը։

Եւ մի օր իր հաղթանակի պատվին Հայոց արքան հրամայում է զոհեր մատուցել հեթանոսական չաստվածներին, սակայն Սուրբ Գրիգորը, հրաժարվում է զոհաբերությունից։ Երբ Տրդատ թագավորն իմանում է, որ Սուրբ Գրիգորը արքայասպան Անակի որդին է, զայրանում եւ առավել ուժգնությամբ ու տանջանքներով է փորձում սրբին պարտադրել աստվածուրացման մեղքը։ Բայց Սուրբ Գրիգոր Լուսավորիչն անդրդվելի է մնում իր հավատի մեջ եւ շարունակում համարձակորեն խոստովանել Քրիստոսին արքայի առջեւ։

Վերջինս, նկատելով Սուրբ Լուսավորչի աննկուն կամքն ու անհուն հավատը, կարգադրում է բանտարկել նրան պատմական Արտաշատ մայրաքաղաքի մոտ գտնվող մի խոր վիրապում, որտեղ նետվում էին մահվան դատապարտված հանցագործները։

Սիրելի՛ հավատացյալ քույրեր ու եղբայրներ, Լուսավորիչ Հայրապետի՝ զոհաբերությունից հրաժարվելու հանգամանքը մեզ մատնանշում է, որ կա մեկ ճշմարիտ Աստված եւ ուսուցանում, որ քրիստոնյան չպետք է գայթակղվի նյութական կամ ձեռակերտ որեւէ իրով։ Հանուն Քրիստոսի նրա կրած սարսափազդու եւ զարհուրելի չարչարանքները վկայում են, որ քրիստոնյան եւ հավատքը, տոկունությունն ու անձնվիրությունը անբաժանելի պետք է լինեն միմյանցից։ Նույնիսկ ամենանվաստացուցիչ ու դաժան մահվան վտանգի առջեւ հավատացյալները չպետք է ընկրկեն ու հրաժարվեն Աստծուց, այլ ամենայն սիրով հաստատեն Նրա ծառան լինելու իրենց հավաքական կամքը։

Խոր վիրապում բանտարկությամբ մահվան դատապարտվելը խորհրդանշում է այն իրողությունը, որ այս կյանքում յուրաքանչյուր քրիստոնյայի քայլ առ քայլ հետապնդում է խավարի իշխանությունը, որի հաղթահարման միակ ուղին աստվածային սիրով ու խոնարհությամբ Աստծու կամքին հնազանդվելն ու աղոթքի մեջ հարատեւելն է։

Սիրելինե՛ր, Սուրբ Գրիգորի վարքը վերլուծելիս՝ հիշատակության արժանի են նաեւ Սուրբ Հռիփսիմյանց կույսերը, որոնք փախչելով Հռոմի Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից՝ ապաստանել էին Հայաստան աշխարհում։ Տրդատ արքան, իմանալով նրանց մասին, անդադար փորձում էր հեռացնել Ավետարանի ճշմարիտ լույսից եւ նույնիսկ ցանկանում էր կնության առնել Սուրբ Հռիփսիմեին։ Սակայն վերջինս, համարձակությամբ ու աստվածային զորակցությամբ, մերժում է Հայոց արքային՝ արժանանալով նրա զայրույթին ու ցասմանը։ Հռիփսիմյանց բոլոր կույսերը ենթարկվում են չարչարանքների եւ ի վերջո ընդունում նահատակության պսակը, որից հետո Հայոց արքան իր զարհուրելի արարքների համար պատժվում է՝ դատապարտվելով ծանր հիվանդության։

Սիրելինե՛ր, ահա՛ Գրիգոր Լուսավորչի այս պատմությունը մեզ սովորեցնում է, որ քրիստոնյային պատահող դաժան փորձությունները կարող են սերտորեն կապված լինել նաեւ իրեն հարազատ ու բարեկամ մարդկանց հետ։ Սակայն չպետք է սարսափի գիրկն ընկնել, այլ անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր հավատացյալ իր հավատքով եւ ապրելաձեւով քարոզի ու գոտեպնդի նաեւ իր մերձավորներին։

Իսկ Տրդատ արքայի օրինակը մեզ սովորեցնում է, որ Սուրբ Երրորդության կամքին հակառակ ընթացող մարդիկ կտրվում են աստվածային շնորհից ու ողորմությունից եւ բազում տառապանքների ենթարկվում։

Տասներեք տարի հետո միայն արքայի քույրը՝ Խոսրովիդուխտը, տեսիլքով իմանում է, որ Հայոց արքային կարող է բժշկել միայն բանտարկված Գրիգորը։ Արքայադստեր հրամանով Լուսավորչին դուրս են բերում վիրապից։ Սուրբն անհապաղ ձեռնամուխ է լինում արքունի քաղաքում քրիստոնեության քարոզչությանը։ Այսինքն՝ ինչպես Քրիստոս հարությամբ պայծառացրեց եւ կենաց հույս պարգեւեց մեղսալի մարդկությանը, այնպես եւ Սուրբ Գրիգորը, դուրս գալով խոր վիրապից, լուսավորեց Հայոց աշխարհը Ավետարանի ճշմարտություններով։ Ծանոթանալով աստվածապարգեւ նոր վարդապետությանը ու բռնելով զղջման ուղին՝ Տրդատ արքան Սուրբ Գրիգորի ձեռամբ արժանանում է Աստծու բժշկությանը։ Ճանաչելով ճշմարիտ Աստծուն եւ տեղի ունեցող հրաշքների շնորհիվ ընդունելով քրիստոնեություն՝ Տրդատ արքան 301 թվականին քրիստոնեությունը հռչակում է Հայոց թագավորության պետական կրոն։

Սուրբ Գրիգոր Լուսավորչի օրինակը վկայում է, որ Աստված լիառատ Իր շնորհները տալիս է նրանց, ովքեր իրենց խաչը վերցրած, անտեսելով բոլոր չարչարանքներն ու տառապանքները՝ գնում են Նրա հետեւից, կատարում են Նրա հրամաններ եւ պահում Նրա պատվիրանները։ Իսկ Տրդատ արքայի օրինակը խոսում է այն մասին, որ նույնիսկ խոտոր ճանապարհով ընթացող մարդը, որը գտնվում է խավարի իշխանության տակ, շատ հաճախ կարող է դարձի գալ ու փրկվել հենց իր կողմից հալածված քրիստոնյայի աղոթքներով ու բարեսրտությամբ։

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, մենք պետք է թույլ տանք Աստծուն բազմել մեր կյանքի գահին, ինչպես որ վարվեց մեր հավատքի հայրը՝ Գրիգոր Լուսավորիչը։ Միայն այդ ժամանակ Փրկիչը կօգնի մեզ եւ ճանապարհ կպատրաստի մեզ համար դեպի Աստծու հավերժական նպատակները։ Երբ մենք ուրանում ենք մեր «ես»-ը, վերցնում մեր խաչը եւ հետեւում Աստծու կամքին, ցույց ենք տալիս, որ իսկապես վստահում ենք Հիսուս Քրիստոսին, իսկապես հավատում ենք Նրան։ Եւ այդ ժամանակ մենք նրան հնարավորություն ենք տալիս մեծ հրաշքներ գործելու մեր կյանքում։ Իսկապես իրական քրիստոնյայի համար չկա ավելի գեղեցիկ բան, քան կյանքն ապրել Քրիստոսով ու Քրիստոսի սիրո համար նույնիսկ ենթարկվել չարչարանքների։ Մենք էլ, լինելով հայ քրիստոնյաներ, պետք է հիշենք եւ հետեւենք Գրիգոր Լուսավորչին, որ իբրեւ քաջ հովիվ ու Ավետարանի անձնուրաց մշակ՝ պայծառացրեց իր հոտի

կյանքը Նազովրեցի Մեծ Վարդապետի ուսմունքով ու հորդորներով, հայ ազգին առաջնորդեց դեպի Քրիստոս։

Հայ ազգն այն սակավաթիվ ազգերից է, որ սիրում են քրիստոնեության էությունը՝ խաչը, նրանք չեն մոռանում, թե ինչպես պետք է գնահատել տառապանքը. հայը մշտապես ընկալում է դրա դրական ուժը, զգում է փրկագնման արդյունավետությունը եւ գիտե՝ ինչպես համտեսել դրա քաղցրություններն ու դառնությունները։

Սիրելինե՛ր, խաչը ճանապարհ է, խաչը յուրօրինակ մի կենսակերպ է։ Լինել հայ քրիստոնյա, նշանակում է քայլել խաչի կենսաբեր ճանապարհով, ապրել խաչի կյանքը։ Այն քրիստոնյաներիս ուխտի նշանն է։ Մենք Աստվածաշնչից գիտենք, որ երբ Աստված մարդու հետ համաձայնություն, ուխտ է կնքում, որպես ուխտի հաստատում՝ անպայման տալիս է մի նշան։ Նոյ նահապետի հետ ուխտ կնքելով՝ որպես ուխտի նշան՝ տվեց ծիածանը, Մովսեսի հետ ուխտ կնքելով՝ որպես ուխտի նշան՝ տվեց Տասնաբանյա պատվիրանները, Նավեի որդի Հեսուի հետ ուխտ կնքելով՝ որպես ուխտի նշան՝ տվեց Ավետյաց Երկիրը։ Աստված մեզ՝ քրիստոնյաներիս հետ ուխտ կնքելով՝ որպես ուխտի նշան՝ տվեց խաչը։ Մեր հավատքի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը հավատարիմ մնաց խաչի ուխտին, քայլեց խաչի ճանապարհով, տառապանքներով հասավ Գողգոթա, իր անձը գամեց խաչին, միացավ Տիրոջը եւ Տիրոջ հետ հարություն առավ։ Ահա այս հարության կենսաբեր լույսն է, որ պարգեւեց Հայոց աշխարհին։

Հետեւաբար, սիրելինե՛ր, մենք էլ՝ որպես Քրիստոսի խաչի ուխտի անդամներ, մեր հավատքի հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի նման հավատարիմ մնանք այդ ուխտի սահմաններին, Լուսավորչի նման անտեսենք եւ հաղթահարենք մեր առջեւ ծառացած բոլոր դժվարությունները, հավատքով եւ վստահությամբ քայլենք խաչի ճանապարհով, որպեսզի իրավամբ համարվենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի հավատքի ժառանգները։

Թո՛ղ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ խաղաղությունը մեզ՝ բոլորիս հետ լինեն. ամեն։